

# ՕՐՈՒԱՆ ՄԵԾ ՏօՆԸ

## ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԷՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԾ

ԵՐԵԿԱԾԱԽԱՆ ՀԱՆԴՔՄԵԾԻ ՍԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
Խ Բ Ա Խ Ճ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը

Պոլսոյ Հայութիւնն ո՞չ մէկ պարագայի մէջ այնքան ոգեւորութիւն ցոյց տուած էր, որքան շաբաթ օր և երեկ:

Հայ ժողովուրդն իր այս հանդէսներով, որոնց բարեկարգութիւնը չխանգարուեցաւ բարեբախտաբար արտասովոր դէպքերով, օտարներու առջև իսկ տուաւ ապացոյցն իր յառաջդիմութեան և քաղաքակրթութեան ընդունակութեան, հետեւաբար ուրախ ենք ըր ազգիս Վեհ. Հայրապետն առիթ տուաւ այս յորելեանական հանդէսներուն, որոնք իրենց յառաջընթած ընդհանուր ոգեւորութենէն զատ, տեւական և մնայուն արդիւնք ալ պիտի ունենան՝ յանուն կրթութեան հաստատուելիք հիմնական դրամագլուխով, որ կը յուսացուի թէ Պոլսոյ մէջ բաւական կարեւոր գումարի մը յանգեցաւ, այս տանական օրերուն մէջ:

Շաբաթ օր Պումգարուի մէջ ոգեւորութիւնն աննկարագրելի էր: Կէս օրէնքանի մը ժամ առաջ արդէն Մայր եկեղեցւոյ շրջակայ փողոցներն անանցանելի ուարձած էին: Կառախումըն անբնդհատ ժողովուրդ կը փօխադրէր Պումգարու, բացի մատակայ թաղերէն հետիոտն եկողներէն, որոնք սառւար թիւ մը կը կազմէին:

Մայր Եկեղեցւոյ միջին Տաճարէն զատքակը լեցուած էր ամբողջութեամբ Քովընտի դշնէն ներս կ'ընդունուէին հրաւիրեալներն և կ'առաջնորդուէին իրենց յառուկ տեղերը: Ամբողջ Տաճարը կ'շղար լոյսերու մէջ, բոլոր ջաներն ու կան-



